



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:
LEXINGTON 2-5790

Մայիս 3, 1955

630 SECOND AVENUE
NEW YORK 16, N. Y.

Հոգեշնորհ
Տ. Սուքիաս Վրդ. ԳալՖայեան
Նախագահ Միսկան Խորհուրդի
Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
Ս. Միլվոթի.

Սիրելի Հայր Սուքիաս,

Ստացած հնք տարւոյս Մարտ 30 թուակիր Զեր Միսկան տեղեկագրութիւնը որով կը հաղորդէիք թէ Զեր Նախագահութեամբ տեղի ունեցած է համայնքիդ ծիսկամ Խորհուրդի մասնակի ընտրութիւնը եւ ներկայացնելով ամբողջական ցանկը նոր կազմին կը խնդրէիք վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ յիշեալ անձերը կանոնաւոր կերպով ընտրուած են եւ կը վայելեն ընտրողներու վստահութիւնը իբրեւ Եկեղեցւոյդ նախանձախնդիր, անձնուէր եւ պարտաճանաչ անդամներ, գրովս կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը եւ պաշտօնները հետեւեալ կերպով:

- | | | |
|--------|--------------------|---------------|
| Տիարք՝ | Ֆրէտ Գասպարեան | Ատենապետ |
| | Մայք Գալուստեան | Փոխ-Ատենապետ |
| | Արմէն Պէնտէզեան | Ատենադպիր |
| | Յովակիմ Երլանճեան | Փոխ-Ատենադպիր |
| | Հայրապետ Պարսամեան | Գանձապահ |
| | Եղիա Գաբրիէլեան | Հաշուակալ |
| | Եսայի Եսայեան | Գոյթապահ |

Կ'օրհնենք նորակազմ Միսկան Խորհուրդի բոլոր անդամները եւ վստահ ենք թէ անոնք պիտի աշխատին մեր Ս. Եկեղեցւոյ պայծառութեան եւ Տէրոջ փառքին համար: Մաղթելով կարողութիւն եւ յաջողութիւն, կը ցանկանք որ անոնք բոլորեն ուրիշ արդիւնաւոր գործունէութեան շրջան մը:

Մնա՛ք Հայրական օրհնութեամբ եւ սիրոյ ողջունիւ.

Աղօթարար

ՄԱՄԱՐԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի